ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 425 - Ա **25 ապրիլի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 183 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողով ստեղծելու և ներմարզային երթուղիների չվացուցակները հաստատելու մասին» N 183 - Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Ստեղծել ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ղազարյան Անուշավան	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի խորհրդական /հանձնաժողովի նախագահ/
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Խաչատրյան Գևորգ	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Բաղդասարյան Կարեն	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ
Գևորգյան Լևոն	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի կրտսեր մասնագետ

Հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչների /համաձայնությամբ/:»:

25.04.2019

ՄԱՐԶՊԵՏ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Digitally signed by GNEL SANOSYAN GNEL 1710830069

ք. Գավառ